# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բարձրաշեն, (091)946061,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 16

## ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 18.06.2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 4 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու թիվ 4 նիստի հետևյալ օրակարգը՝

1.Բարձրաշեն համայնքի 2018 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

2.Հողի հարկի արտոնություն տալու մասին:

3.Համայնքի ավագանու 08.12.2017 թվականի թիվ 33-Ն և թիվ 34-Ն որոշումների մեջ լրացում կատարելու մասին:

5.Ընթացիկ հարցեր:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԺԵԼԱ
3. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄՀԵՐ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բարձրաշեն, (091)946061,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 17-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1- ին կետով`ավագանին որոշում է.

Ելնելով անհրաժեշտությունից, համայնքի 2018 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները`

1. 2018 թվականի համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 290.0 հազար դրամ պակասեցնել, ավելացնելով 04.02.01.55 գործառնական դասակարգման 4241 հոդվածին, համայնքի անասնաբուժական ծառայության աշխատանքները կատարելու համար.
2. 05.01.01.51 գործառնական դասակարգման 4213 հոդվածից պակասեցնել 430.0 հազար դրամ, ավելացնելով 04.02.01.55 գործառնական դասակարգման 4241 հոդվածին, համայնքի անասնաբուժական ծառայության աշխատանքները կատարելու համար.
3. 28.60.00 գործառնական դասակարգման 900415003046 եկամտային հաշվին մուտք եղած 224.425 հազար դրամը հատկացնել ֆոնդային բյուջեի 08.02.03.52 գործառնական դասակարգման 5113 հոդվածին մշակույթի տան մասնակի վերանորոգման աշխատանքների համար.
4. 01.01.01.51 գործառնական դասակարգման 4239 հոդվածից պակասեցնել 80.0 հազար դրամ, ավելացնելով նույն գործառնական դասակարգման 4234 հոդվածին, թերթերի բաժանորդագրության համար:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԺԵԼԱ
3. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄՀԵՐ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ՍԵՐՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բարձրաշեն, (091)946061,

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 18

## ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հողի հարկի արտոնությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով և հիմք ընդունելով հանձնաժողովի 04.06.2018 թվականի կազմած ակտը նորատունկ այգիներ հիմնելու վերաբերյալ՝ ավագանին որոշում է.

Նորատունկ այգետարածություններ հիմնած Բարձրաշեն համայնքում սեփականատեր՝ Հենրիկ Մամիկոնի Դռնոյանին տալ հողի հարկի արտոնություն՝ համաձայն կից հավելվածի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԺԵԼԱ
3. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄՀԵՐ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված

Արարատի մարզի Բարձրաշեն

համայնքի ավագանու 18.06.2018թ.
թիվ 18 որոշման

| N | Հողամասի սեփականատերը | Հողամասի ծածկագիրը | հողատեսքը | հողի հարկի արտոնություն տալու ժամկետը | հողամասի մակերեսի չափը/հա/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Դոնոյան Հենրիկ Մամիկոնի | 0123 - 0010 | պտղատու այգի (կորիզավոր) | 2018-2022թթ. | 0,529 |

Աշխատակազմի քարտուղար (Ն.Մարգարյան )

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բարձրաշեն, (091)946061,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 19-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 08.12.2017 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 33-Ն ԵՎ 34-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Արարատի մարզպետի 28.03.2018 թվականի թիվ 1/7/1767-18 գրությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքի 08.12.2017 թվականի <<Համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի, համայնքապետարանի աշխատակազմի և <<Բարձրաշենի մանկապարտեզ>>-ի(համայնքային ոչ առևտրային կազմակերպություն) աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին>>ավագանու թիվ 34-Ն որոշման թիվ 1 հավելվածում՝ <<Բանվոր 1 միավոր 80.0 հազար դրամ>> տողից հետո, կատարել հետևյալ լրացումը՝ <<Անասնաբույժ 1 միավոր 120.0 հազար դրամ>>:

2.Համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 8-ի <<Բարձրաշեն համայնքի 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 33-Ն որոշման մեջ <<Տեղական վճարներ>> բաժնի 4-րդ կետից հետո լրացնել 5-րդ կետը՝ <<5.Համայնքային անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայություններից օգտվելու համար սահմանել հետևյալ վճարները.

1) կենդանիների հիվանդությունների բուժման,կանխարգելման հարցերով խորհրդատվություն -500 դրամ.

2) Ծննդօգնություն՝

2.1) թեթև միջամտություն-1.000 դրամ.

2.2) ծանր միջամտություն-5.000 դրամ.

3)արյուն առում կամ այլ նմուշ առում՝ մանր կենդանի-100դրամ, խոշոր կենդանի-200դրամ, բացառությամբ <<Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում>> պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների.

4)կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար-200դրամ.

5)ախտահանություն-1 քմ 200 դրամ.

6)միջատազերծում(դեզինսեկցիա)- 1 քմ 100 դրամ.

7)կրծողների ոչնչացում (դեռատիզացիա)-1 քմ 200 դրամ.

8)արհեստական սերմնավորում-5.000 դրամ.

9)կենդանու հերձում՝ մանր կենդանի-1.000դրամ, խոշոր կենդանի-3.000դրամ.

10) կենդանու բուժում՝ կախված հիվանդությունների տեսակից և կենդանու տեսակից՝ յուրաքանչյուր այցելությունը մանր կենդանի-1000 դրամ, խոշոր կենդանի-2000դրամ.

11) կենդանիներին ախտապանդային զննում՝ կախված կենդանու տեսակից՝
մանր կենդանի-1.000 դրամ, խոշոր կենդանի-2.000դրամ,

12)կենդանիների հետսպանդային զննում ( մինչև 2018թ.հուլիս ամիսը), մանր կենդանի-1.000 դրամ, խոշոր կենդանի-2.000դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԺԵԼԱ
3. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄՀԵՐ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՐՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բարձրաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բարձրաշեն, (091)946061,

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 20

## ԾՆՈՂԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 19-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի բնակչուհի Հասմիկ Սահակյանի դիմումը համայնքի ավագանին որոշում է.

Հաշվի առնելով, որ համայնքի բնակչուհի Հասմիկ Սահակյանը համարվում է բազմազավակ մայր, ունի երեք անչափահաս երեխաներ, երեքն էլ հաճախում են գյուղի մանկապարտեզը և գտնվում է սոցիալական ոչ բարվոք վիճակում, ուստի Հասմիկ Սահակյանին տալ մանկապարտեզ հաճախող, իր երեխաների վարձավճարի 50%-ի արտոնություն:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՎՈՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԺԵԼԱ
3. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄՀԵՐ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ